

դեր ունեցած է Բարոյախօսն, որ ըստ ինքեան կենդանախօսական յիշատակարան մըն է՝ զրոյցներով զարդարուած. եւ զարձեալ թէ բաց ի Բարուախօսէ չեն եղած ուրիշ յիշատակարանք նոյնանման նիւթերով. վասն զի հաւաքմանց մէջ կը գտնուին նիւթեր որ մեր այժմու Բարոյախօսէն դուրս են, ուստի ասոնք ալ աղղեցութիւն ըրած են հաւաքմանց ճոխանալուն, մինչեւ անգամ Բժշկարաններ (Հմմտ. «Գլոս» առակն՝ ՄԾԲ, տես շար. Բ, 274,) աշխարհագրական եւ տիեզերագրական հեղինակութիւնք (Հմմտ. «Սուրխամահի» առակն՝ Մ2Է, շար. Բ, 292) եւ այլ նմաններ (տես § 417—21:) Վերջնոց կարգին մէջ մեծ տեղ մը կը բռնեն պատուական քարերու վրայ եղած գրութիւնք, որոնց յատուկ հատուած մը կը նուիրէ Հայագէտն (§422,) ուր կը յիշուին մեր մատենագարանին թ. 31 ձեռագրին կրկին կտորները՝ «Անուանք ԲԺ. ականցն» եւն, եւ «Այս է գիրք ճօհարնուն», Առաքելոյ Գաւրիթեցոյ Պատմութեան մէջ առնուած «Գիրք ճօհարնուն» (տպ. Էջմ. 1884, էջ 454—67) եւ նմաններ, որոնց մասին ուսումնասիրութիւն մ'ալ լոյս տեսած է Գ. Պատկանանի գրէն (Պետրք. 1873,) քննութեան առնելով «պատուական քարերն, անոնց անունքն ու յատկութիւնքն» Ժ. զարուն Հայոց գաղափարաց համեմատ՝: Այս տեսակէն կը գտնենք հաւաքմանց մէջ օրինակի համար առակներս «Սափիրա ակն», «Պլաւր ակն» եւ «Խասիաթ Պլաւրի» (ՅԿԶ—ՅԿԸ, տես շար. Բ, 332—33,) զորոնք թարգմանութեամբ ալ յառաջ կը բերէ Հայագէտը. (§ 423—25:) Վարդանեան եւ այլ հաւաքմանց մէջ երեւցող «Բարոյախօսական» նիւթերը կը ներկայացընէ յատուկ տախտակ մը. (Տխտ. ԻԹ, էջ 426:)

Բարուախօսը վերջապէս նշանակութիւն ունի ոչ միայն իրրեւ աղբիւր Վարդանայ եւ անկէ ետքը «Վարդանեան» հաւաքմանց հեղինակաց, այլ նաեւ իրրեւ ընդունարան մը պատսպարելու օտար տարրներ, իրրեւ կենդրոն մը՝ որուն շուրջն հաւաքուեցան ինչ ինչ առակներ հին ծագմամբ, նոյնպէս նոր առակներ՝ որ Վարդանայ եւ իւր յաջորդներուն կը վերաբերին: Յատկապէս ծանօթ է Բարոյախօսի խառն ձեւը, որուն մէջ Բարոյախօսի նիւթերուն հետ հիւսուած են ետպպեան առակներ եւ Վարդանեան առակաւորներ. այսինքն անոր մէջ կը գտնենք հաւ-

1 Տես էջ 424: Ինչպէս Հայագէտը նշանակած է (անդ՝ Ծան. 3) ուրիշ տեղ մը («Ցուցակ», 1054) բոլորովին մոռացած էինք այս կարեւոր գործը նշանակել:

աքում մը՝ «Բարոյախօս-Եսովպ» եւ «Բարոյախօս-Վարդան» (Հմմտ. § 386:) Եւ այսպէս երկուքն ալ փոխադարձ յարաբերութեան մէջ են, ինչպէս Բարոյախօսը Վարդանայ եւ Վարդանեանց վրայ, նոյնպէս հակադարձաբար վերջինս առաջնոյն զարգացման համար. (տես § 426—428:) — Կը մնայ այժմ երրորդ աղբիւրը: (Շար. Ե-ԿէԷ:)

Հ. Յ. Տ.



Կ Ե Ն Ս Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Բ Թ Ի Թ Կ Տ Ո Ք Թ. Մ Կ Ր Տ Ի Զ Բ Ա Ռ Լ Ե Տ Ի Ե Լ Ե Ն

Ինկեր եւ աշակերտակից Բարունակ Գրութիկեան, Յակոբ Յովհաննէսեան եւ Գաբրիէլ Սեւեան բժիշկներուն, ինչպէս յայտնած եմ արդէն, Մկրտիչ բժիշկ Բառլատիեան, չունի դժբախտաբար այն պատմական կարեւորութիւնը՝ զոր ունեցած են իւր ընկերները. թէպէտ իրրեւ բժիշկ՝ ոչ անոնցմէ նուազ կարող, եւ ոչ անոնցմէ նուազ ուսեալ էր:

Բնիկ Կ. Պոլսեցի, Մկրտիչ Բառլատիեան ծնած կ'ըսուի, դէպ ի 1822 կամ 1823 թուականները, ինչպէս կը պատմէին ինձ վերջերս՝ Վսեմ Տոքթ. Ստեփան Փաշա Աշխենեան եւ Վսեմ Տոքթ. Գաբրիէլ Փաշա Սեւեան:

Որդի արուեստաւորի՝ Մկրտիչ իւր նախնական ուսումը Կ. Պոլսոյ մէջ առնելով, յետոյ կը խրկուի Վենետիկ. հոն Ռափայէլեան Վարժարանին մէջ բաւական տարի կը մնայ եւ կ'առնու բարձր ուսում եւ կը թուրքիւն:

Ռափայէլեան Վարժարանին շրջանը լրացրենէն վերջը՝ դէպ ի 1830ին կը գառնայ իւր ծննդավայրը, եւ յաջորդ տարին՝ 1840ին՝ Բարունակ Գրութիկեանի, Յակոբ Յովհաննէսեանի, եւ Գաբրիէլ Սեւեանի հետ կ'արձանագրուի կայս. բժշկական Վարժարանը:

Ժրջան ուսանողութեամբ ու յաջող քննութիւններով, իւր բժշկական վկայականը կ'ընդունի 1849ին, նոյն երեք նշանաւոր Հայերուն հետ մի եւ նոյն ժամանակ:

Բառլատիեան կը վկայուի ցամաքային զինուորական բժիշկ, եւ բաւական տարիներ Կ. Պոլսոյ մէջ, բայց աւելի յաճախ դրսերը, այլեւայլ զինուորական հիւանդանոցներու մէջ ծառայելէ յետոյ, 1863 կամ 1864ին կը բարձրանայ Գաւառաւոր-Լեւան (Lieutenant-Colonel) աստիճանին, եւ կը խրկուի Պաղատ, իրրեւ բժշկապետ